


ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Գ. Պարոյ 40 ՄԶ.
Պարոյ 2 լիտր
Վեցամս. Գ. Պարոյ 3 ՄԶ.
Պարոյ 1 լիտր
Ստոր երկրորդը 50 ՄԶ.
Մանուկներու տողը մէկ անգամի հա-
մար 3 դուրու, երկու անգամի հա-
մար 2 դուր 5. աւելի անգամներու
համար զատ սակարկութիւն կը-
լայ
Երարանչիւր թիւ 40 վարտ արծ:



ԼԵՐԱԳԻՐ

ՀԱՆԱՊԱԶՕՐԵԱՅ

ՊԱՅՄԱՆՔ

Դուքս պաշտօն լրագրաց ծանու-
ած ախար խորագրութեան վրայ է:
Լրագրաց վերաբերեալ նամակ
կամ որ և ինչ գրութիւն խորագրի
—Տնօրէնին պիտի ուղղուի: Վարա-
նիս Ստանդարտը ծանուցիւ թիւ
198, Նոյն թիւն, Մասիսի գրասեն-
եակը:

Մանուկներու տողը մէկ անգամի հա-
մար 3 դուրու, երկու անգամի հա-
մար 2 դուր 5. աւելի անգամներու
համար զատ սակարկութիւն կը-
լայ



ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆՆՈՒՊՈԼԻՍ 28 ՕԳՈՍՏՈՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Աւստրիական զօրաց Ենի-Պարա-
մաներուն համար քանի մ'օր առաջ
Պոնտիայէն զրկուած յանձնախումբ
բին տեղեկագրոյն կ'ապաստուի եղեր,
որոյ վրայ որոշում պիտի տրուի: Ա-
ւստրիոյ կայսրը Պրուքի զօրաբանա-
կըն է, ուր հրաւիրուած է Գարա-
տաղի իշխանը: Կըսուի թէ Աւստ-
րիացիք Սերվիոյ հողէն զօրք անցու-
նել առաջարկեցին, բայց Պ. Ռիվիէ
չէ ընդուներ: Իսկ Գարատաղէն զօրք
անցունելու համար, ինչպէս արդէն
ժանուցած եմք, Նիքիթա իշխանին
հետ բանակցութիւն պիտի լինի:
Գուցէ այս վերջինն աւելի նպաստա-
ւոր լինի Աւստրիոյ առաջարկութեան:
Պրանչիսկոս Յովսէփ կայսեր կայս-
թէյնի մէջ Գերմանիոյ կայսեր հետ
տեսակցութիւնն, և ետքն ալ Պիս-
մարք իշխանին և Աւստրալի կոմսին
գարձեալ կ'աւելին մէջ բանակցու-
թիւնն և այս վերջինն գոհ կ'երպու-
վի ինչն վերադարձը, նոյնպէս Ման-
թիպէյի մարաշխանին վարչաւիս
երթալով Գերմանիոյ կայսեր կողմէն
Ռուսիոյ կայսրը գիմնադրեց, և այս
երկու կայսերաց Ալեքսանդրովիչի մէջ
տեսակցութիւնը կը հաստատեն թէ
Մէլ Անգլիական լրագրին այն կար-
ծիքը թէ երկու կայսերաց համաձայ-
նութիւնը վերջացած չէ և կրնայ
տակաւին նոր գերեք խաղալ: Այ-
նու ամենայնիւ ուրիշ թերթեր ար-
դէն կըսեն թէ Գերմանիա և Աւստ-
րիա կայսթէյնի տեսակցութեամբ
նոր համաձայնութիւն մը հաստատե-
ցին Պալքանի թերակղզոյն մէջ Ռու-
սիոյ յարձակմանց առաջնն առնելու
համար, թէ Սնդղիս ալ իրենց հետ
պիտի միանայ, և թէ Ռուսիա ար-
դէն ուրիշ գաղափարներ կը փնտռե-
ի Շուէտ և Նորվեգիա, Տանիմարքա-
յի հետ Սլոնիմիսկիան միութիւն
մը հաստատելով: Դէպքերը կրնան
ցուցնել թէ այդ երկու կարծեաց ո-
րն ստոյգ է:

Գարատաղի գետապանին կայսերա-
կան պալատն ընդունելութիւնը քա-
նի մ'անգամ ետ ձգուած էր: Ասոր
պատճառը Գարատաղի գետապան Պ.
Ռատոնիկի ազգային զգեստով ըն-
դունուելու պնդումն էր, արտաքին
գործող նախարար Բարձր Սաֆվէթ
փաշան հարցուցած էր թէ արդեօք
Պ. Ռատոնիկ աւորձանակներ պիտի
կրէ՞ իւր մէջը: — Պ. Ռատոնիկ պա-
տասխանեց է. «Ձեր բարձրութիւնն
արդէն գիտէ որ մեր առանց զէնքի
գետը չեմք երեքը:» — Սաֆվէթ փա-
շան ալ ըսեց է. «Ձեր լեռներուն մէջ

կարելի է օգտակար լինի այդ, բայց
կայսերական պալատը զէնքով երթա-
լու պէտք չկայ:» Կերեւի որ Պ. Ռատո-
նիկ պնդեց է լեռնական սովորու-
թիւնը պահելու համար: Յաւալի է
որ այսպիսի ժամանակ մը, երբ մեծ
տէրութեանց գետապանները պէտք է
խորհուրդ տան Բ. Դրան՝ Գիւրտե-
րուն, Չէքքէղերուն և նմանեաց
զէնքն առնուլ, որպէս զի գաւա-
ռաց մէջ սարսափելի կերպիւ շատ
ցած աւազակութիւններն ու սոյա-
նութիւնները նուազին, Գարատաղի
գետապանին կայսերական պալատն ա-
տրճանակներով ու գանակով ներկա-
յանալու անպատեհ պահանջով
մերժող գտնուած չերեւիր մայրաքա-
ղաքիս Եւրոպական դիւանագիտու-
թեան մէջ:

Հելլենական խնդրոյն վրայ Օսման-
եան և Հելլեն պատուիրակաց երրորդ-
նիստն ալ տեղի ունեցաւ առանց Ժի-
ատենագրութիւնը բանակցութեանց
հիմ բռնելու խնդրոյն վրայ համա-
ձայնութիւն գոյանալու: Կը կարծուի
որ տակաւին նիստ մը լինի և այնու-
հետեւ գործը մեծ տէրութեանց միջ-
նորդութեանը մնայ: Բայց արդեօք
այն ալ անյաշող պիտի ելնէ՞, այժ-
մէն այս կէտը դուշակել գիտարին
է, թէ և շատերը կը պնդեն թէ Հել-
լենական խնդիրը կրնայ վերջապէս
պատերազմի յանդիլ: Հաւանական
է սակայն որ եթէ բանակցութիւնն
ըլ գաղթին, թուրքիոյ և Յունաս-
տանի միջև յարաբերութիւնը խղիւն
և Հելլենական պատուիրակներն, ո-
րոյ մին է մայրաքաղաքիս գետապանն,
Աթէնք վերադառնան:

Գետապանները Բ. Դրան միաբան
ժանուցադիր մը ներկայեցին, որով
Բաթանթի տուրքը կը մերժեն օտար
հպատակաց համար: Գետապանները
կը յայտարարեն որ եթէ այդ տուր-
քէն գոյանալիք եկամուտները խառն
հսկող յանձնախումբի մը համարա-
ւութեան ներքեւ գրուին, և եթէ
ըստ Պէրլինի վեհաժողովին որոշման
տէրութեան երումուտը միջադպրին
յանձնախումբի մը յանձնուին, այն
ժամանակ Բաթանթի տուրքը պիտի
ընդունին:

Փարիզի Տէպա լրագրին հետեւ-
եալ յօդուածը հրատարակած է, որ
Փոքր-Ասիոյ բարենորոգմանց վրայ
մեր առիէ առաջ յայտնած կարծիքը
կը հաստատէ:

«Սնդղիական խորհրդարանին փակ-
ման առթիւ կարգադրուած ճառէն
կը հասկնուի թէ, կըսէ Տէպա, Սնդ-
ղիա Պէրլինի վեհաժողովին դուժա-
րումէն առաջ թուրքիոյ նկատմամբ
իրեն համար գծած ուղղութիւնը չէ
թողած: Յունիս կ'ի պայմանագրու-

թիւնն իրեն համար պարտաւորիչ
գաղափար մը կը մնայ, որ իւր վրայ
պարտը կը դնէ թուրքիան պաշտպա-
նել Ռուսիոյ ոսնձգութեանց դէմ և
միանգամայն փոքր-Ասիոյ մէջ բա-
րենորոգումներ ընելու կը պարտա-
ւորէ Օսմանեան կառավարութիւնն:
Այս տեսակէտով, թագուհւոյն ճա-
ռըն իրական կարեւորութիւն մ'ունի,
զոր արժան է նշանակել:

«Վերջին պատերազմին պատճա-
ռած աղէտները, կ'ըսէ թագուհին
«Իւր ճառին մէջ, հարկաւորութիւնն
«Օսմանեան կառավարութեան կողմէ
«ճանչցուած բարենորոգմանց գոր-
«ծագրութեան արդեւք եղան մինչև
«ցարդ: Բայց այս նկատմամբ իւր պարտաւոր-
«ութիւնը խոստովանելու կարողութեամբ
«Եւսէն Վոյս արքայ Օսմանեան կառավարու-
«թեան արդեւք եղան մինչև
«Եւսէն»

«Սնդղիական կողմէ որ թուրքիա
կենայ և իբրեւ պետութիւն անոր
պահպանութեանը հող կը տանի:
Գիտէ որ այդ երկրը կենսական զօ-
րութիւններ ունի, որոցմէ օր մ'օ-
գուա քաղել կարելի է, և կողմէ
թէ ոչ այդ գործութիւնները մեծապէս
աւելցնել, գոնէ դանոնք պահել իւր
քաղաքական դիտաւորութեանց ծա-
ւայեցելու համար: Այս նպատա-
կին հասնելու համար, բարենորոգ-
մանը անհրաժեշտ էին, և ահա այս
գիտաւորութեամբ է որ յունիս կ'ի
պայմանագրութիւնն ստորագրուած
էր: Այդ պայմանագրութիւնը մին-
չև ցարդ մեռեալ տառ մնաց, և կը
կարծուէր թէ Սնդղիա հրաժարած
է անկից: Սակայն այդպէս չէ: Սնդ-
ղիական կառավարութիւնն հաստա-
տապէս որոշած է անոր իրականաց-
ման հետամուտ լինիլ:

«Թագուհին իւր ճառին մէջ կը
հաստատէ թէ իւր կառավարութիւ-
նը չգաղթիր խորհուրդներ և աղգա-
րարութիւններ տալէ թուրքիոյ, որը
մինչև ցարդ լսելի չէն եղած: Արդ-
եօք միշտ այսպէ՞ս պիտի լինի:
Ձեմք կարծեք: Սուրբան իւր յա-
տուկ շահուց այնքան լինամի չէ որ
իւր գտնուած վիճասութեւ հանդուսն
յարաւանէ: Լաւալոյն զգացմանց
պիտի վերադառնայ: Բանապետու-
թեան և քմահաճ իշխանութեան բո-
լոր արահետներն ընթանալէ ետեւ,
թերեւս պիտի համոզուի թէ իւր եր-
կիրներուն փրկութիւնն իմաստուն և
չանկաւոր ազատամտութիւն մը ձեռք
տանելով կարելի կը լինի և միայն այն
ժամանակ ծրագրեալ բարենորոգմանց
իրականացումն հնար պիտի լինի:

«Բայց այս դարձին սպասելով,
Սնդղիական կառավարութիւնը փոքր-
Ասիոյ գեղարդը ժողովրդոց և մաս-
նաւորապէս Հայոց վրեժակը լուրջ ըզ-
բաղման առարկայ կընէ: Այսպէս ա-
հա բաղձալիւ հիւսկատոսներ նըշա-

նակեց, որոյ պաշտօնն է կառավար-
չաց գործողութեանց վրայ հակել և
զօլաքաղութեանց ու անիրաւութեանց
դէմ բողոքել: Մէք այս միջոցներուն
աղղուութեանը դէմ առարկութիւն
չեմք ընել: միայն կըսեմք թէ չարիքին
չհամապատասխանող գործմաներ են:
Թուրքիոյ վերականգմանն ու ապա-
գային տեսակէտով, անոնք ու-
րիշ անպատեհութիւն մ'ունին, այն
է Եւրոպիոյ մէջ Օսմանեան կառա-
վարութեան պատիւը կտրող իրո-
ղութիւնները կուտակել և իւր իշ-
խանութեան ներքեւ գանուող ժող-
վրդոց առեւտրութիւնն յարուցանել ի-
րեն դէմ: Մարդ երբոր Սնդղիացի
հիւսկատոսաց տեղեկագրերը կար-
դայ, վաշայից կառավարութեան
դէմ զղուանք մը կ'ըլլայ: Բայց այս-
չով արդարապէս անուանարկեալ կա-
ռավարութիւնը չ'ը կրնար ինքզինք
բարեւել: Կրնայ եթէ ինչ ինչ պայ-
մանք կատարին, եթէ քմահաճ իշ-
խանութիւնը կարենայ գաղթել և
Պարսոյ մէջ, և թուրք վարչութեան
մէջ տիրող անիշխանական վիճակին
տեղ լուրջ հսկողութիւն մը հաստա-
տել: Վերջերս խաղաղութիւն փաշային
առաջարկածին պէս՝ պատասխանա-
տու նախարարութեան մը կանոնաւո-
րապէս արշաւն վարելը, պաշտօնա-
տարաց աւելի խիստ քննութեամբ
մ'ընարուիլը, գաւառական կառա-
վարաց և վարչական խորհրդոց ա-
ւելի ընդարձակ իշխանութիւն տըր-
ւիլը, Լիբանանու մէջ կեցածին նը-
ման կանոնադրութեան մ'ի գործ-
դրուիլն և իսլամ ժողովրդեան փոք-
րամասնութիւն կազմած տեղերուն
համար քրիստոնեայ կառավարաց
անուանումը մէկ մէկ բարենորոգում
ներ են, զորս Օսմանեան նախարարք
և Եւրոպիոյ պետական անձինք պէտք
է ուղղութեան թեման առնուին: Այս բա-
րենորոգումներն եթէ գործողութիւն
տարակոյս չկայ թէ աւելի օգտակար
և արդու պիտի լինին քան թէ հիւ-
սկատոսաց անուանումն, որոց միտի
պաշտօնն իրենց գանուած երկրին
մէջ գործողութեամբ չարեաց վրայ ի-
րենց կառավարութեան տեղեկութիւն
տալ է:

Սնդղիական լրագրէր իրենց վեր-
ջին թիւերուն մէջ, Սնդղիական
Սնդղիական նորընտրեց գետապան Սթը-
ֆալէններին և գետապանութեան ու-
րիշ անդամաց ի ֆոտոլը գտած բա-
րեկամական ընդունելութիւնը կը
ժանուցանէին: Երեկ և ուրիշ օրը
մայրաքաղաքս եկած հիւրերը
յանկարծ տո ցաւալի լուրը տուին
թէ ամուսն Յին Սթըֆան զօրաց դուշ-
մ'ապստամբներ է և Քաղալը քաղա-
քին խաժամուժին հետ միացել է:
Այս ամբարը տեղեւոյն Սնդղիական
գետապանութեան վրայ յարձակումը:

գետականութեան բոլոր անդամները ծարր երէ՛ անոնց կողմանէ յուսաւա- տական գիմար թու թեմէ մը յետոյ ։ Այս բոլորը առ ող Հայաստան հեռագ- րերն երէկ հրատարակեցինք ։ Բայց ինքնութեան հեռագիրը ևս հետաքրքր- րական մանրամասնութիւններ կու- տան ։ Անդամները զօրաց և խաժամու- ժին յարձակումն անցնալ չորեքշաբթ- թի օրը (օգոստ. 22) առաւօտէն մինչև իրիկուն տեւեր է ։ Իմիր Եղեղուայ խան ինք ևս բերդին մէջ պաշարուել է ։ և հետեւաբար չէ կրցեր օգնութիւն հասցնել ։ Գետականութեան բոլոր ան- գետաց և Սըր Գալէնքերի ալրու- մագրութեան ներքև գտնուող զին- ւորաց սպաննուիլը ծանուցանող հե- ռագիրն Հնդկաստանի փոխարքայ Լորտ Լիթթըն ինք քաշած էր ։

Լորտ Լիթթըն Անգլիանոստանայ մէջ գտնուող Անգլիական զօրաց հրամա- նատար Բոյէլը զօրավարին հրաման ըրած է որ անմիջապէս փեալիլի վը- րայ քալելով գրաւէ զայն ։ և հետեւ- գիրը կը ծանուցանեն թէ մեծ զօ- րագունդ մը փութով Անգլիանոստանայ մայրաքաղաքին վրայ կը քալէ ։ Եւ գրուել խան ինքն ալ Անգլիական բա- նակին միջամտութիւնը խնդրել է ։

Մինչև շաբաթ իրիկուն ապստամբ բախան շարժումը կը թուի թէ Ան- ցանոստանայ մէջ շատ տարածուած չէր ։ որովհետև հեռագիրը կը ծա- նուցանեն թէ Անգլիանոստանայ սահ- մանագլխէն սկսեալ մինչև Շուշի քաղաքը կը շարունակուի իրիկուն հանդարտ էր ։

Հնդկաստանն Սթանտարտ լը- րագիրն ուղղեալ հեռագիր մը կը ծանուցանէ թէ փեալիլի եղելու- թեանց վրայ Հնդկաստանի մէջ մեծ յուզում ծագել է ։ և Ժողովուրդը կը պահանջէ եղեր ուր փեալիլի ամբողջութիւնները քանդուին ։

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐՆԵՐ

Բեղրուպուրի 8 սեպտ. ։

Աթէնքի Ռուսական դեսպան Պ. Սա- արաթի Կ. Պոլսոյ դեսպան անուանեցաւ փոխանակ Լօպանով իշխանին ։ որ Լօնտ- րայի Ռուսական դեսպան անուանեցաւ փոխանակ Շուշիով իշխանին ։

Պ. Սեւ Կ. Պոլսոյ Ռուսական դես- քանատան խորհրդական անուանեցաւ ։

Լօնտրա 8 սեպտ. ։

Ըստ որում Սըր Հէնրի Լէյքը Սու- րիա ընկերը ուղեորութեան մէջ Օսմանեան հողէն դուրս չսլիտի ելնէ ։ իւր բացակա- յութեան միջոցին Անգլիական զործակա- տար շախի գտնուի Կ. Պոլսոյ մէջ ։ Դեւ- սպանատան երկրորդ քարտուղար Պ. ԸՍ- մայթ զործերը տնօրինելու պաշտօն սկի- տի ունենայ ։ Այսու ամենայնիւ Պ. Մէ- լէթ, որ ի մօտայ Կ. Պոլսի երթալով հոն Ժամանակ մը սկիտի կենայ ։ պատահա- կան մասնաւոր խնդրովք սկիտի դբադի ։

Սըր Հէնրի Լէյքը ուղեորութեան նը- սպատակն է Փոքր Ասիոյ միջակին անձամբ տեղեկանալ ։

Փիլիպէ 8 սեպտ. ։

Փիլիպէ Անգլիական ընդհանուր հիւ- պատոս Մ. Թօմաս Միլէյ՝ Ալէքս փաշային հետ ունեցած մէկ տեսակցութեան մի- ջոցին յայտնեց թէ Արեւելեան Բուսիլի իսլամաց աններելի կացութիւնը գտնուե- յոստանալու թեան միշտ է ։

Պ. Միլէյ, ի հաստատութիւն իւր խօ- սից, Թաթար-Պաղարձը և ուրիշ տեղեր ըրած պոռոտներուն միջոցին կատարած քննութեան արդիւնքն յիշեց ։ Այդ տե- րերու իւրաքանչեւ ևս չեն համարձակել ի- րենց տուններէն դուրս ելնելու առանց ծանր բռնութեանց երկիւղի ։ Պ. Միլէյ հաս- տատեց թէ Իսլամաց պահանջած անշարժ- անիականութիւնները Պոլսոյ քաղաքը քաշած են ։ այնպէս որ բազմաթիւ գեղեր կամ ամբողջապէս և կամ մասամբ անհետա- ցած են ։

Իսլամք ամեն օր Անգլիոյ ընդհանուր հիւպատոսորանը կ'ապաստանին ։ Տակա-

ին առջի իրիկունն 30 գաղթականք և- կան պաշտպանութիւն խնդրելու ։

Անգլիոյ ընդհանուր հիւպատոսին այս- ցիկորութեան ծանց վրայ ։ Ալէքս փաշան հե- ռագրերն ի Թաթար-Պաղարձը ։ որպէս զի խոտ քննութիւն մը բացուի ։

Այս օրը հետեւի հետեւի ։

Լօնտրա 8 սեպտ. ։

Փեալիլի գէպերն ամէն կողմէ հաս- տատութիւն կը գտնեն ։

Թայմի ։ այդ գէպերուն վրայ խօսե- լով սա կարծիքը կը յայտնէ թէ Անգլիոյ անմիջապէս պէտք է գործէ ։ բայց իրեն համար պատճառ մը չկայ Անգլիանոստան Անգլիոյ երկիրներուն հետ միացնելու ։ և ոչ ալ իւր աշխարհապարտութիւնը փոխելու ։

Միւստարտ լրագիրն այս գործին մէջ Ռուս լրատեսներու ձեռքը կը տեսնէ ։

Թայմի լրագիրը զրոյց մը կը յիշէ ։ որուն նայելով Շուշիովք կ'որոշ կորչա- քօֆ իշխանին պիտի յաջորդէ եղեր ։

Բեղրուպուրի 8 սեպտ. ։

Ձարն երէկ Լիվաթիա հասաւ ։

Կորստքօֆ իշխանին և Պիլիպի իշխա- նին միջև հաշտութիւն մ'է տեսակցու- թիւն յառաջ բերելու մեծ ջանք կը լինի ։

Լօնտրա 8 սեպտ. ։

Օսմ. Բանու.	11 3/16
Փոլս.	1865 4 1/4
»	1869 43 1/8
»	1871 54 1/2
»	1872 21 1/2
»	1873 42 1/4
»	1974 74 7/8
Անգլ. Բանու.	97 11/16

Փարիզ 8 սեպտ. ։

Օսմ. Բանու.	11.42 1/2
Գաղղ. Բանու.	30/0 84.07 1/2
»	» 86
»	» 50/0 117.77 1/2

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Կայսերական հրամանաւ ։

Ալէքսան Էֆէնտի կարնոյ առա- ջին աստիճանի դատարանին (Պիտա- յէթ) ընդհանուր դատախազի օգ- նական անուանեցաւ ։

Հէ.քիմեան Ալլահիէրտի օղլու Մի- քայէլ Էֆէնտին Բաբերթի ընդհա- նուր դատախազի օգնական անուա- նեցաւ ։

Խաբէնտէրունի Թահիրաթի քար- տուղար Կարապետ Էֆէնտին Եղե- սիոյ (Ուրֆա) ընդհանուր դատախա- ջի օգնական անուանեցաւ ։

Արեւելեան Բուսիլի Եւրոպական յանձնախմբին Օսմանեան պատուի- րակ Ասիմ փաշան և Ալլահ Էֆէնտին երէկ մայրաքաղաքս վերադարձան ։

Հեռագիր մը կը ծանուցանէ թէ Հայէլի նախորդ առաջին Բօմիէր Մազհար փաշան ։ զոր Սայիտ փաշան պաշտօնանկ ըրած էր ։ ասկէ առաջ իւր արամագրութեան ներքև գըր- ւած պաշտօնատարաց հետ Կ. Պոլսի դալու համար Լոյսի շոգեհաւով ճան- րայ ելեր է Խաբէնտէրունէն ։

Պուլղարիայէն դուրս արմուրք հանելն անցնալներն իշխանութեան կողմէ արգելուած էր ։ Այժմ Արե- վելեան Բուսիլի կառավարութիւնն ալ յանկարծ նմանօրինակ արգելք մը հրատարակած է Արեւելեան Բու- միլիի նահանգին համար ։

Ամասիայէն եկած նամակներ դա- ւաւուն միջակը շատ գէշ կը նկարա- գրեն ։ Այն կողմերը զրկուած բազ- մաթիւ Զէրքէս գաղթականք երկ- րին տէրն եղած են ։ Ասոնք ուղած- նին կընեն անվախ ու անպատիժ ։ զէնքով կը պտղան ։ համարձակա- պէս գիւղերը կը մոնեն ։ կը գողնան ։ կ'ապանեն և աւարառութիւններ կ'ընեն ։ Հասարակաց ապահովութիւն բնաւ չէ մնացած ։

Ուրբաթ իրիկուն Գաղթ գիւղի վերջին շոգեհաւը գող մոնելով նոյն աւուր հասցիւն եղած 7.000 զրուշի գրամ նաւապետին սենեակէն գող- ցան ։

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԷՍԶԱՄԸ ՈՒՄՈՒՄԻԷ

Կրէկ իրիկուն գողութեան	12.17
Այս առաւօտ բացուեցաւ	12.12
Կէս օրին	12.11
Բուսիլի երկրորդ	Փր. 44,
Թիւրքիա	Սր. 832 20
ԸՆԹԱՅՔ ԱՐԹԱՅՔԱՐԹ	
25 Օգոստոս	
Ասիէթ է Ժէնէրայի բաժ. Անգլ. իւր.	4.25
» Թիւրանական թեան	3. 5
Կ. Պոլսոյ Պաշտային	5.25
Քրէտի Ժէնէրայ	4. 2
Թրակիայ	Օսմ. իւր. 4 1)
ԸՆԹԱՅՔ ԳՐԱՄՈՅ	
28 Օգոստոս	
Անգլ. իւր.	109 25
Կարօլսի իւր.	87 25
Խիւսիսի իւր.	90 5
Գըրմիշ	51 20
Մէհմեթի տարբերութիւն	6 22
Հիւսիսային	49 20
Մէթալք	18
Պիլիք	530

Ա.Զ.Գ.Ա.ՅԻՆ

Պէրլինի համալրարանին Հայերէն լեզուի ուսուցիչ հանդուցեալ նշա- նաւոր Պ. Բէթլմանի յաջորդ Պ. Սա- խաւ ։ Բրուսիոյ կառավարութեան ծախիւք կիւրիկոյ և Տիգրանակեր- տի հնութիւնները խաղաղելու հա- մար Կ. Պոլսի եկած լինելով ։ երէկ Ս. Պատրիարքին այցելութիւն տը- ւաւ ։

Ն. Սըրապնութիւնն ալ Պ. Սախա- ուի յանձնարարագրեր տուաւ առ դաւառական առաջնորդու ։ որպէս զի ի հարկին պէտք եղած գիւրութիւն- ներն ընծայեն իրեն ։

Նախարարաց խորհրդոյ նախա- դաս Բարձր. Արիֆի փաշային քանիցս Ս. Պատրիարքին տուած խոտմանց հակառակ Մշեցի Գալիք սարկուազը դեռ բանտէն արձակուած չլինելուն համար՝ Ն. Սըրապնութիւնն այսօր վը- ըրտին թագրիւր մը գրեց Արիֆի փաշային ։ դիտել տալով թէ յիշեալ Սարկուազին վրայ որ և է յանցանք մը կեցած չլըլալին հանգերձ՝ ոտի- կանութեան նախարարը չուղեր ար- ձակել զայն ։

Ատաբաղարէն Հայոց Բաղբա- կան Հայոց և Բուսիոյ ստորագրու- թեամբ Պատրիարքարան եկած հե- ռագիր մը տեղւոյն Ժողովուրդեան ցա- ւալի կացութիւնը նկարագրելով կը յարէ թէ Զէրքէսաց կողմէ հարստ- հարութիւնք կը շարունակեն և թէ կենաց և ընկից ապահովութիւն բնաւ չկայ ։

Խաբէնտէրունի պէ՛ս անուն մէկը քըն- նըլութեան պաշտօնով 66 օր հոն մը- նացեր ։ ամեն բան քննել է ։ և սակայն իր այս քննութիւնը նախորդներուն նման օգուտ մը յառաջ չէ բերեր ։ մանաւանդ թէ Ժողովուրդեան վիճակն աւելի ծանրացեր է ։

Ս. Պատրիարքն յիշեալ հեռագ- րին պատճէնը թագրելով Բարձր. Ա- րիֆի փաշային զրկեց ։

Լրագրոյ շաբաթ աւուր թուոյն մէջ ի պաշտպանութիւն ձերմակեա- նի Չինական ոսով նամակ մը կը տես- նեմը Մաթիսի գէմ ։ Հեղինակն ինք- ղինը ծածկելով հրապարակ եղելու քաջութիւնը չէ ունեցած ։ զի իւր

գրուածն ոչ թէ քննադատութիւն ։ այլ ծայրէ ծայր լուսանք է՝ անհա- նի լեզուով մը ։ ուր «Գիտնական Սիւք» ։ «Կորչաք քիմեան կանխատեսութիւն» ։ «Ալեկտովի խռովայոյց» անիմաստ բառերը գուհիկ հայհոյութեանց հետ բաւական ներդաշնակաւոր խառ- նուրդ մը կազմած են ։ Հարկ չկայ Ը- սելու թէ այնպիսի խայտառակ գըր- ւածի մը պատասխանելու չենք զի- ջանիլ ։ Բայց ձերմակեանի վրայ եր- կու խօսք ըսել հարկ կը համարեմք ։ Այդ վարդապետն «անմեղ» է եղեր ։ երանի թէ այնպէս լինէր ։ Արդարեւ իւր վրայ եղած գալթակցական ամ- բաստանութիւնը մեղ համար մութ է ։ բայց իւր յանցանքն այն օրէն կըս- կըսի ։ երբ քանի մը պարզամիտներ խաբելով խռովութիւն հանեց ։ և մինչ իւր դրդմամբ Ժողովուրդեան մէջ կուի ծագած էր ։ ինք բեմն ելնե- լով ինքզինք Թոմէսի գեղեցիկ կը նմանցնէր ։

Կը հարցնեմք դարձեալ ։ ո՞ր է ձերմակեանի արժանիքն ։ ի՞նչ օգ- տակար դործ մ'ըրած կամ ծառա- յու թիւն մատուցած է Հայաստան- եայց եկեղեցւոյ կամ աղբիւր ։ որպէս զի մեր համակրութեան արժանի լի- նի ։ Ընդհակառակն՝ այդ վարդապե- տըն իւր առաջին համբաւը կը հա- նէ՝ ոչ թէ արժանեօք կամ ծա- ւայութեամբ մը ։ այլ գայթակղու- թեամբ և աններելի խռովայոյցու- թեամբ ։ Ահա ասոր համար է որ հա- սարակաց կարծիքը խառն կը դատե- զայն ։

Մեք մեր պարտքը կատարեցինք՝ իրաւամբ քննադատելով այդ անձին ընթացքը ։ և մեր ընթերցողը կրնան վկայել որ անձնական տառելութիւն մը չունեմք ։ քան զի երբ պարտա- դանցութեան ընթացք մը տեսնեմք ։ նոյն իսկ եթէ հեղինակը Վեհ. Կա- թոլիկոսը լինի՝ կը քննադատեմք ։ ինչպէս որ անցեալները քննադատած էինք ։ ո՞ր կը մնայ այդպիսի անը- շան վարդապետ մը ։ որ դարձեալ կըսեմք ։ բնաւ արդիւնք մը կամ որ և է ազգօգուտ գործ մը չունի ։

Տիֆլիսի Մշակ օրագրին մէջ հե- տեաւը կը կարդամք ։

«Կիրակի օր ։ օգոստոսի 5ին կա- տարվեցաւ Թիֆլիսում մի շատ փա- ռաւոր եկեղեցական հանդէս ։ Մի հրէայ օրհորդ ։ որ մի հայ օֆիցէրի նշանածն է ։ ընդունեց Հայոց լուսա-ւորչական դաւանութիւնը ։ Միւսու- թիւնը կատարվեցաւ Ս. Գեորգի ե- կեղեցում ։ ահագին բազմութեան ներկայութեամբ ։ Մեր կողմանեան վարչութեան Բարձր ատոմանաւոր- ներից ոմանք ներկայ էին հանդիսին և կնքահայրն էլ մի բարձրատիճան անձնաւորութիւն էր ։»

Թ.Գ.Ա.Յ.ՈՒՊՈԼԻՍԻ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՅ

Մու 17 յուլիս 1879

... Խաբէնտէրունի Մաթիս պատուա- կան լրագրոյ ։

Պիլիքի վեհաժողովին մէջ հանդի- սապէս կըքուած դաշնադրութեան ՅԱՐԴ յօդուածին և կայսերական Բօմիէրէն- բուն ի Հայաստան մոնելուն արդիւնքը տակաւ առ տակաւ տեսնուի սկսուած ։

Թո՛ղ կայսերական բարեխմբում կառա- վարութիւնը հոգ տանի և ծախս ընէ Հայաստանի բարեկարգման համար ։ Թող Անգլիոյ կառավարութիւնը այն բարե- նորոգմանց իրապէս գործադրութեան իւր գործակցութիւնը խոտմանայ ։ հոս

* Արդեօք վերապատուելին ըսե՛ր կու- զէ թէ իրեն կին մը սիրահարած էր ։ բայց ինք Յոմէսի Գեղեցիկ նման անօր- սէրը մեթեղուն համար դրուարտուած էր ։

